

Հաստատված է

Վավերացնում եմ

ՀԱԱՀ գիտական խորհրդում

ռեկտոր

Ա. Թարվերդյան

„-----“, ----- 2016 թ.

„-----“, ----- 2016 թ.

(արձանագրություն № )

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ (ՀԱԱՀ)

### ՌԵԿՏՈՐԱՏԻ

### Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ

#### 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հայաստանի ազգային ազրարային համալսարանի (այսուհետ՝ համալսարան) ռեկտորատը ռեկտորին կից խորհրդակցական մարմին է: Համալսարանի գիտական խորհրդի նիստերի միջև ընկած ժամանակահատվածում ռեկտորատն իր կանոնակարգով իրեն ընձեռված լիազորությունների շրջանակում քննարկում է համալսարանի գործունեության բոլոր ոլորտներին վերաբերող հարցերը:

#### 2. ՌԵԿՏՈՐԱՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Համալսարանի ռեկտորատի կազմում՝ համաձայն համալսարանի կանոնադրության, ընդգրկվում են ռեկտորը, պրոռեկտորները, ռեկտորի գլխավոր խորհրդականը, ռեկտորատի քարտուղարը, ուսումնամեթոդական կենտրոնի տնօրենը, գլխավոր հաշվապահը, ֆակուլտետների ղեկանները, մասնաճյուղերի, գիտահետազոտական ինստիտուտների, կենտրոնների տնօրենները:

Ռեկտորատի նիստին անհրաժեշտության դեպքում հրավիրվում են քննարկվող հարցերին առնչվող ստորաբաժանումների ղեկավարներ, կոլեկտիվի անդամներ:

Ռեկտորատի նիստը վարում է ռեկտորը, նրա բացակայության ժամանակ՝ պրոռեկտորը:

Ռեկտորատի նիստերը հրավիրվում են ամիսը մեկ կամ երկու անգամ: Անհրաժեշտության դեպքում հրավիրվում են արտահերթ նիստեր:

Ռեկտորատի նիստերում քննարկվող հարցերը պլանավորվում է յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբում: Հրատապ հարցերի քննարկումը կատարվում է արտահերթ նիստերում կամ լրացուցիչ կերպով մտցվում է հերթական նիստի օրակարգում:

Ռեկտորատի նիստերում քննարկվում են համալսարանի և մասնաճյուղերի.

- Ուսումնադաստիարակչական աշխատանքների,
- Գիտահետազոտական աշխատանքների և գիտական ներդրումների,
- Ուսումնական, արտադրական և նախադիպլոմային պրակտիկաների,
- Ուսանողների ընթացիկ, կիսամյակային քննությունների կազմակերպման և անցկացման, առարկայական պարտքեր ունեցող ուսանողների վերաքննությունների անցկացման,
- Ուսանողների կուլտուր-կենցաղային, հանգստի կազմակերպման, հանրակացարանաբնակ ուսանողների հետ տարվող աշխատանքների,
- Վճարովի համակարգում սովորող ուսանողների ուսման վարձի վճարման, կարիքավոր ուսանողների ուսման վարձը գեղջելու,
- Ուսանողների շրջափոխման
- Ուսուցման գործընթացի կազմակերպման, տեսական և գործնական պարապմունքների անցկացման, կրթական բարեփոխումների, ուսումնական լաբորատորիաների հազեցվածությանը սարքավորումներով, տեխնիկական միջոցներով, ռեակտիվներով, ուսումնական պարագաներով, կենդանիներով պարապմունքներին ուսանողների հաճախումների,
- Ուսանողների և դասախոսական կազմի շարժունության,
- Ուսանողների մասնակցությունը գիտական խմբակներին, ամբիոնների, գիտական կենտրոնների, պրոբլեմային լաբորատորիաների, ինստիտուտների գիտահետազոտական աշխատանքներ,
- Պետական քննությունների և դիպլոմային (մագիստրոսական թեզերի) նախագծերի (աշխատանքների) նախապատրաստման, անցկացման և արդյունքների ամփոփման,
- Մագիստրանտների և ասպիրանտների հետ տարվող ուսումնական, գիտահետազոտական աշխատանքների վիճակի,
- Դասագրքերի, ուսումնական ձեռնարկների, մեթոդական գրականության առկայության նախապատրաստման և գրադարանային սպասարկման խնդիրները, դասագրքերի, ուսումնամեթոդական գրականության, գիտական հետազոտությունների արդյունքների հրատարակման,

- Ամբիոնների դասախոսների, գիտահետազոտական միավորումների գիտաշխատողների հաստիքավորումը , ուսումնական ծանրաբեռնվածության որոշումը,
  - Ուսումնափորձնական տնտեսությունների գործունեությունը, համալսարանի մասնագիտական ամբիոնների և առանձին մասնագետների օգնությունը տնտեսություններին,
  - Համալսարանի ֆինանսատնտեսական գործունեությունը,
  - Համալսարանի տնտեսական գործունեությունը,
  - Համալսարանի գործունեության վերլուծության և հավատարմագրման,
  - Կապիտալ և ընթացիկ վերանորոգումների, շինարարության, գույքի ձեռքբերման, ավտոպարկի աշխատանքների,
  - Համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումների և մասնագետների կողմից հանրապետության գյուղատնտեսական ձեռնարկություններին, ֆերմերային տնտեսություններին մասնագիտական օգնություն ցույց տալու,
  - Արտերկրի ուսումնական, գիտական և այլ կազմակերպությունների հետ համագործակցության քննարկումներ,
  - Միջազգային, տարածաշրջանային և ներքուհական գիտաժողովների, հոբելյանական միջոցառումների նախապատրաստման,
  - Նոր մասնագիտությունների և մասնագիտացումների ձևավորման, նոր կառուցվածքային միավորումներ ստեղծելու քննարկումներ,
  - Ֆակուլտետների, դեկանատների, ուսումնամեթոդական կենտրոնի, ամբիոնների, ուսանողական խորհրդի, ուսանողական գիտական ընկերության աշխատանքների արդյունքների քննարկում,
  - Համալսարանի ստորաբաժանումներում գործավարության վարման,
  - Համալսարանի գործունեությունը վերահսկող հանձնաժողովի աշխատանքային հարցերի քննարկում,
  - Կրթության որակի բարելավման և այլ հիմնախնդիրներ,
  - Բոլոնիայի գործընթացի ներդրման հիմնախնդիրները:
3. Ռեկտորատի նիստը համարվում է իրավագործ` նրա անդամների 2/3-ի մասնակցության դեպքում: Որոշումներն ընդունվում են ռեկտորատի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ և կենսագործվում ռեկտորի հրամաններով:

4. Ռեկտորատի արտահերթ նիստերը հրավիրվում են ռեկտորի նախաձեռնությամբ կամ ռեկտորատի անդամների 1/3-ի պահանջով:
5. Անհրաժեշտության դեպքում ռեկտորատի նիստում կազմակերպվում է համալսարանի գիտական խորհրդի հարցերի նախնական քննարկում:

Ռեկտորատի որոշումները կենսագործվում են ռեկտորի հրամաններով կամ անհրաժեշտության դեպքում ըստ կանոնակարգի տեղափոխվում է հարցը գիտական խորհուրդ:

Հաստատված է

Վավերացնում եմ

ՀԱԱՀ գիտական խորհրդում

ռեկտոր

Ա. Թարվերդյան

„-----“, ----- 2016 թ.

„-----“, ----- 2016 թ.

(արձանագրություն № )

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱԴԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ (ՀԱԱՀ)

### ՄԵԹՈԴԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

### Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ

#### 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- Մեթոդական խորհուրդը (այսուհետ՝ խորհուրդ) նշանակվում է ռեկտորի հրամանով տարբեր մասնագիտությունների առավել փորձառու դասախոսներից, երեք տարի ժամկետով:
- Մեթոդական խորհուրդը գործում է աշխատանքային պլանի համաձայն, որը հաստատում է ռեկտորը (պրոռեկտորը):
- Խորհուրդը հաշվետու է համալսարանի գիտական խորհրդին:

#### 2. Պարտականությունները և իրավունքները

Մեթոդական խորհուրդը իրականացնում է հետևյալ աշխատանքները

- Ղեկավարում է համալսարանի ուսումնամեթոդական աշխատանքները:
- Հսկողության է սահմանում իր ընդունված որոշումների կատարման նկատմամբ:
- Կազմակերպում է ուսումնամեթոդական գիտաժողովներ և սեմինարներ:
- Քննարկում է ուսումնական պլանների կատարման և կատարելագործման աշխատանքները:
- Ուսումնասիրում է տեսական և գործնական ուսուցման օրգանական կապը:
- Քննարկում է առարկաների և ուսումնաարտադրական ու նախադիպլոմային պրակտիկաների ծրագրերը:

- Ուսումնասիրում է դասախոսությունների, լաբորատոր-գործնական պարապմունքների և սեմինարների անցկացման մեթոդիկան:
- Քննարկում և վերլուծում է ուսանողների դիպլոմային և կուրսային աշխատանքների (նախագծերի) թեմատիկան:
- Ուսումնասիրում և առաջարկություն է ներկայացնում դասագրքերի, ուսումնական ձեռնարկների և ուսումնամեթոդական և օժանդակ այլ գրականության մշակման և հրատարակման վերաբերյալ:
- Ուսումնասիրում և քննարկում է կրթության բարեփոխումների ընթացքը և մեթոդիկան:
- Քննարկում է բազմագործոնային համակարգով կրթության իրականացման մեթոդաբանությունը:
- Հետամուտ է կրթության որակի բարելավման խնդիրներին:
- Քննարկում է ֆակուլտետային մեթոդական հանձնաժողովների աշխատանքները:
- Քննարկում է ամբիոններում առարկաների բաշխումը և ներկայացնում է առաջարկություններ:
- Մեթոդական խորհուրդը իրավասու է հանձնարարականներ տալ ուսումնամեթոդական կենտրոնին, ֆակուլտետային մեթոդական հանձնաժողովներին, ամբիոններին և դասախոս-ներին ուսումնամեթոդական փաստաթղթերի մշակման վերաբերյալ, իր նիստերին հրավիրել համալսարանի համապատասխան ստորաբաժանումների ղեկավարներին և ներկայացուցիչներին ուսումնամեթոդական փաստաթղթերի մշակման համար և լուծել այլ մեթոդական հարցեր:
- Մեթոդական խորհրդի որոշումները, ռեկտորի կողմից այն հաստատելուց հետո, պարտադիր է կիրառման բոլոր ֆակուլտետների, ստորաբաժանումների, ամբիոնների և դասախոսների համար: